




«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՐԱՑԻՈՆ

«14» 11 2014թ.

Հաստատում եմ

Գնումների աջակցման կենտրոնի
պետի ժամանակավոր պաշտոնակատար

 Ռ. Թունյան

N ՍՅ-ԳԲԽ-01/14 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների 07.02.2014թ. N 13.1/1659-14 գրությամբ ներկայացված «Նայթեքս» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 07.02.2014թ. N 13.1/1659-14 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Նայթեքս» ԲԲԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 07.02.2014թ. N 13.1/1659-14 գրությամբ Կենտրոնն է ուղարկել ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 04.02.2014թ. ԴՎԱ/252 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

2. «Նայթեքս» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը և հիմնավորումները

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, կարծիք ստանալու նպատակով 18.03.2014թ. N 09/032-488 գրությամբ դիմել է «Նայթեքս» ԲԲԸ-ին: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը Ընկերությունը Կենտրոնին հասցեագրված 24.03.2014թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Նայթեքս» ԲԲԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 23.04.2013թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/40-1» պայմանագրով Ընկերության կողմից պարտավորությունները չեն կատարվել, քանի որ հանրապետությունում զգալի սակագնային փոփոխություններ են կատարվել ինչպես էներգետիկ ռեսուրսների, այնպես էլ ընկերության կողմից օգտագործվող հումքի /բամբակյա մանրաթելի/ սակագներում:

Մասնավորապես, Ընկերությունը «ԳԱԲ» Էլեկտրոմաշ ՍՊԸ-ի հետ ունի կնքված պայմանագիր՝ 2.30 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով 46.654 կգ բամբակյա մանրաթել գնելու վերաբերյալ, սակայն համաշխարհային շուկայում բամբակի գների կտրուկ աճի պատճառով նշված ներկրող ընկերությունը հումքը «Նայթեքս» ԲԲԸ-ին մատակարարել է 2.75 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով կամ տեղի է ունեցել հումքի 19.6% թանկացում:

Թանկացում է տեղի ունեցել նաև էլեկտրաէներգիայի և գազի սակագներում, որոնք աճել են 16.67% -ով:

Վերոհիշյալ գրությունում «Նայթեքս» ԲԲԸ-ն նշել է նաև, որ վերջինս հանդիսանում է տեղում վերամշակող կազմակերպություն, բամբակը ներմուծում է

դրսից, իր արտադրությունը հումքի վերամշակումից մինչև պատրաստի արտադրանք ստանալը կատարում է տեղում և հումքի ու էներգակիրների սակագների փոփոխություններն էականորեն ազդել են թողարկվող արտադրանքի ինքնարժեքի վրա, ուստի խնդրել է ՀՀ կառավարության N 168 որոշման 67-րդ կետի 2-րդ ենթակետի հիմքով նոր համաձայնագիր կնքել՝ վերանայելով սակագնային փոփոխությունները: «Նայթեքս» ԲԲԸ-ն հայտնել է, որ գնային փոփոխությունների պատճառով ընկերությունը հայտնվել է ծանր ֆինանսական պայմաններում:

«Նայթեքս» ԲԲԸ-ն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս գտնվում է Շիրակի մարզում, որը համարվում է աղետի գոտի և ապահովում է շուրջ 200 աշխատատեղ, խնդրել է ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Նայթեքս» ԲԲԸ-ի ներկայացուցիչը, մասնակցելով Կենտրոնում ս.թ. մարտի 7-ին ժամը 15:00-ին կազմակերպված քննարկմանը, պնդել է 24.03.2014թ. գրությամբ Կենտրոնին ներկայացրած փաստարկները և հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված ժամկետում ապրանքները մատակարարելու ընթացքում Ընկերությունը հայտնվել է ծանր ֆինանսական պայմաններում, որի հետևանքով չի կարողացել կատարել պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:

Ընկերության ներկայացուցիչը Կենտրոնում ս.թ. հոկտեմբերի 29-ին ժամը 15:00-ին կազմակերպված հանձնաժողովի նիստին ներկայացրել է 4.926.239 ՀՀ դրամը «Նայթեքս» ԲԲԸ-ի կողմից ՀՀ պետական բյուջե վճարված լինելու հանգամանքը հավաստող 27.09.2014թ. NN 140927010207021-1937 և 141017000049021-2024, 17.10.2014թ. N 141017000050021-2025 և 22.10.2014թ. N 141022041845021-2049 վճարման հանձնարարագրերի պատճենները:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը

Պատվիրատուի ներկայացուցիչը, մասնակցելով Կենտրոնում ս.թ. հոկտեմբերի 29-ին ժամը 15:00-ին կազմակերպված հանձնաժողովի նիստին, հայտնել է, որ Պայմանագրի լուծման արդյունքում Ընկերությունից ՀՀ պետական

բյուջե է գանձվել 4.926.239 (չորս միլիոն ինը հարյուր քսանվեց հազար երկու հարյուր երեսունինը) ՀՀ դրամ, որից 2.625.100 ՀՀ դրամը՝ որպես Պայմանագրի կատարման ապահովման համար նախատեսված տուժանք, 131.255 ՀՀ դրամը՝ որպես Պայմանագրով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկված տուգանք և 2.169.884 ՀՀ դրամը՝ որպես տույժ:

4. ՍՑ-ԳԲԽ-01/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 07.02.2014թ. N 13.1/1619-14 գրությամբ ներկայացրած «Նայթեքս» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-7/40-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

2. Ընթացակարգի արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարության և «Նայթեքս» ԲԲԸ-ի միջև 23.04.2013թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-7/40-1» ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր), որի թվով 11 չափաբաժիններով նախատեսված 26.251.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով ապրանքների մատակարարման համար սահմանվել են հետևյալ ժամկետները:

Ընկերությունը պարտավորվել է 2013թ. մայիս ամսին մատակարարել 750 Լ-կ կոստյում /բաճկոն և անդրավարտիք/՝ հոսպիտալային, բամբակյա, իսկ հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին համապատասխանաբար՝ 750 Լ-կ, 750 Լ-կ և 525 Լ-կ կոստյում, հունիս և հուլիս ամիսներին՝ 500-ական խալաթ՝ հոսպիտալային, տաք, հունիսին՝ 600 հատ թասակ /կալպակ/՝ բժշկական, բամբակյա, մայիս և հունիս ամիսներին՝ 1100-ական խալաթ /բամբակյա/, բաճկոն խոհարարի բամբակյա՝ հունիս և հուլիս ամիսներին համապատասխանաբար՝ 1100 հատ և 1000 հատ, անդրավարտիք խոհարարի բամբակյա հունիս և հուլիս ամիսներին, համապատասխանաբար, 1000 հատ և 600 հատ, թասակ խոհարարի բամբակյա՝

հունիսին՝ 1000, իսկ հուլիսին 800 հատ, բաճկոն խոհարարի բամբակյա, կանացի, հունիս և հուլիս ամիսներին, համապատասխանաբար, 500 հատ և 300 հատ, գոգնոց խոհարարի բամբակյա՝ հունիսին և հուլիսին համապատասխանաբար՝ 1000 հատ և 800 հատ, 400 հատ բամբակյա խալաթ հունիս ամսին, 600 հատ գոգնոց՝ ռետինապատ՝ օգոստոսին:

3. Ընկերությունը 05.12.2013թ. N 8786 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով հաշվի առնել 2013թ.-ին էներգետիկ ռեսուրսների և Ընկերության կողմից օգտագործվող հումքի սակագներում տեղի ունեցած փոփոխությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ընկերությունը դրանց հետևանքով չի կարողանա կատարել իր պարտավորությունները, և ՀՀ պաշտպանության նախարարության և «Նայթեքս» ԲԲԸ-ի միջև 23.04.2013թ. կնքված N «ՇՀԱՊՁԲ-7/40-1» ծածկագրով պայմանագիրը լուծել՝ չկիրառելով տույժեր:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 09.12.2013թ. N ԴՎԱ-3602 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ կարող է լուծվել պայմանագրով նախատեսված ապրանքների շուկայական գների ավելի քան 20% փոփոխման դեպքում: Սակայն, ի պատասխան նշված գրության, Ընկերության կողմից չեն ներկայացվել 20% թանկացումը հիմնավորող փաստաթղթեր:

4. ՀՀ պաշտպանության նախարարության 10.01.2014թ. N 514/26 գրությանը կից ներկայացված տեղեկանքի համաձայն՝ Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունները տվյալ օրվա դրությամբ խախտվել են հետևյալ ապրանքատեսակների մասով՝ Ընկերության կողմից չի մատակարարվել 1-ին չափաբաժնով նախատեսված 2775 հատ կոստյում /բաճկոն և անդրավարտիք/ հոսպիտալային, բամբակյա, 2-րդ չափաբաժնով՝ 1000 հատ խալաթ՝ հոսպիտալային, տաք, 3-րդ չափաբաժնով՝ 600 հատ թասակ /կալպակ/ բժշկական, բամբակյա, 4-րդ չափաբաժնով՝ 2200 հատ խալաթ՝ բամբակյա, 5-րդ չափաբաժնով՝ 2100 հատ խոհարարի բամբակյա բաճկոն, 6-րդ չափաբաժնով՝ 1600 հատ խոհարարի բամբակյա անդրավարտիք և 8-րդ չափաբաժնով՝ 800 խոհարարի բամբակյա բաճկոն կանացի:

5. Պատվիրատուի Ընկերությանն հասցեագրված 22.01.2014թ. N ԴՎԱ/174 գրությամբ միակողմանի լուծվել է ՀՀ պաշտպանության նախարարության և

«Նայթեքս» ԲԲԸ-ի միջև 23.04.2013թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/40-1 ծածկագրով պայմանագիրը:

6. Պայմանագրային պարտավորությունները խախտելու հետևանքով Ընկերության նկատմամբ հաշվարկվել է ՀՀ պետական բյուջե գանձման ենթակա 4.926.239 ՀՀ դրամ, որից 2.625.100 ՀՀ դրամը՝ որպես Պայմանագրի կատարման ապահովման համար նախատեսված տուժանք, 131.255 ՀՀ դրամը՝ որպես Պայմանագրով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկված տուգանք և 2.169.884 ՀՀ դրամը՝ որպես տույժ:

7. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. հունիսի 13-ի օրինական ուժի մեջ մտած վճռով ՀՀ պաշտպանության նախարարության հայցը՝ «Նայթեքս» ԲԲԸ-ից հոգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 4.926.239 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է:

8. Ընկերության կողմից Կենտրոն է ներկայացվել 4.926.239 ՀՀ դրամը «Նայթեքս» ԲԲԸ-ի կողմից ՀՀ պետական բյուջե վճարված լինելու հանգամանքը հավաստող 27.09.2014թ. NN 140927010207021-1937 և 141017000049021-2024, 17.10.2014թ. N 141017000050021-2025 և 22.10.2014թ. N 141022041845021-2049 վճարման հանձնարարագրերի պատճենները:

5. ՍՑ-ԳԲԽ-01/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 149-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 6 ամսից մինչև մեկ տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է:

Օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնումների բազային միավորը մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ է:

Պայմանագրի 3.1.6 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է նույն Պայմանագիրը: Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բազմիցս խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետները:

Այսպիսով, «Նայթեքս» ԲԲԸ-ի կողմից բազմիցս խախտվել է Պայմանագրով նախատեսված պարտավորությունը՝ Ընկերության կողմից չի մատակարարվել 1-ին չափաբաժնով նախատեսված 2775 հատ կոստյում /բաճկոն և անդրավարտիք/ հոսպիտալային, բամբակյա, 2-րդ չափաբաժնով նախատեսված 1000 հատ խալաթ՝ հոսպիտալային, տաք, 3-րդ չափաբաժնով նախատեսված 600 հատ թասակ /կալպակ/՝ բժշկական, բամբակյա, 4-րդ չափաբաժնով նախատեսված 2200 հատ խալաթ՝ բամբակյա, 5-րդ չափաբաժնով նախատեսված 2100 հատ խոհարարի

բամբակյա բաճկոն, 6-րդ չափաբաժնով նախատեսված 1600 հատ խոհարարի բամբակյա անդրավարտիք և 8-րդ չափաբաժնով նախատեսված 800 խոհարարի բամբակյա բաճկոն կանացի:

Նկատի ունենալով, որ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, որի հետևանքով հաշվարկված տույժի և տուժանքի չափերը չեն գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը հաշվարկված տույժը և տուժանքը վերականգնվել է, ուստի գտնում ենք, որ առկա են համապատասխան հիմքեր Ընկերությանը Ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Ընկերության կողմից չկատարված պայմանագրային պարտավորությունների ծավալը՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 07.02.2014թ. N 13.1/1659-14 գրությամբ «Նայթեքս» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանն ընդգրկել ՀՀ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ Գնումների բողոքարկման խորհրդի կողմից որոշում կայացնելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում «Նայթեքս» ԲԲԸ-ի կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված 10 ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝


Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝

Գնումների բողոքարկման և
սահազանգման բաժնի վարիչ՝

Գնումների բողոքարկման և
սահազանգման բաժնի գլխավոր
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-01/14 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝




Հ. Այունց



Հ. Ենգոյան



Դ. Դավթյան



Լ. Հովակիմյան